ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԻՆ

Մրցույթի ծածկագիր ICARE- 052/AM/22

Առաջարկները ներկայացնելիս պետք է հաշվի առնել հետևյալ պայմանները.

1. Ֆինանսավորում

   1.1. «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամի (ICARE) կողմից:

2. Սերտիֆիկատներ

   2.1. Կապալառուն պետք է ներկայացնի պատշաճ փաստաթղթեր բոլոր ապրանքների աղբյուրի, ծագման և որակի ստանդարտներին համապատասխանության մասին:

   2.2. Կապալառուն ինքն է կրում տվյալ փաստաթղթերի ձեռք բերման հետ կապված ծախսերը:

3. Բեռնափոխադրում, ադմինիստրատիվ ծախսեր և այլ հարկեր:

   3.1. «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամը փոխհատուցում է միայն աշխատավարձի և նյութերի հետ կապված ծախսերը: Ուստի խնդրում ենք. ա/ նյութի արժեքում ներառել գնման և տեղափոխման հետ կապված բոլոր ծախսերը և հարկերը, բ/ աշխատանքի արժեքում ներառել բոլոր ծախսերը աշխատանքը կազմակերպելու համար (այլ բեռնափոխադրման, պահեստավորման, վերադիր ծախսեր և այլն), շահույթը, ՀՀ-ում գործող բոլոր հարկերը:

4. Հատուկ պայմաններ

   4.1. Ծրագրի իրականացման հետ կապված ծախսերի նվազեցման նպատակով «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամը իրեն պայմանագր(եր)ում նշված որոշ նյութերի ձեռք բերման իրավունք է վերապահում:

   4.2. Վճարման կարգի մասին պայմանագրային պայմանների նախնական մանրամասներ՝
   ա/ Պատվիրատուի կողմից կանխավճարի տեսքով վճարում չի կատարվում,
   բ/ Կատարված աշխատանքների դիմաց վճարում կկատարվի ամսական կտրվածքով՝ կապալառուի կողմից ներկայացված և Հիմնադրամի կողմից վավերացված կատարողական ակտի հիման վրա,

5. Ծրարների ներկայացման պայմաններ

5.1. Հայտերը պետք է դրված լինեն փակ ծրարների մեջ, պետք է կնքված լինեն, ծրարների վրա պետք է նշված լինի ուղարկողի (մասնակցի) հասցեն և անվանումը, ստացողի («Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամի) հասցեն և անվանումը, մրցույթի ծածկագիրը, հետևյալ բառերը «Չբացել մինչև 2022թ. Նոյեմբերի 10-ը ժամը 16:00-ը»:

5.2. Մրցութային առաջարկները պետք է ներկայացվեն կնքված փակ ծրարների մեջ: Մրցույթի առաջարկները կընդունվեն մինչև 2022թ. Նոյեմբերի 10-ը, ժամը 16:30-ը հետևյալ հասցեով՝

«Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամ, ք. Երևան, Տերյան 74 փողոց, 4-րդ հարկ:

6. «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամը իրեն իրավունք է վերապահում ընդունելու կամ մերժելու որևէ Հայտ և չեղյալ համարելու մրցութային գործընթացը և մերժելու բոլոր հայտերը ցանկացած ժամանակ նախքան պայմանագրի շնորհումը առանց որևէ պարտավորության ենթարկելու տվյալ Հայտատուին կամ Հայտատուներին, կամ առանց պարտավորությունների բացատրություն տալ Հայտատուին կամ Հայտատուներին «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամի գործողությունների հիմքերի վերաբերյալ:

7. Փաստաթղթերի ցանկ

7.1. Մրցութային ծրարները պետք է պարունակեն 2 փաթեթ՝ 1 Բնօրինակ և 1 Պատճեն.

1) Ձև 1՝ Մասնակցի հայտ
2) Ձև 2՝ Կատարված աշխատանքների ցանկ (կից համապատասխան փաստաթղթերով)
3) Ձև 3՝ Ծավալաթերթ /կնքված/ (անհրաժեշտության դեպքում կպահանջվի նաև էլեկտրոնային տարբերակը)
4) Կանոնադրության պատճեն
5) Պետռեգիստրի վկայականի պատճեն
6) Տեղեկանք հարկային պարտավորությունների վերաբերյալ
7) Տեղեկանք սպասարկող բանկից՝ բանկային տվյալների վերաբերյալ:
8) Անհրաժեշտ շինարարական լիցենզիաների պատճեններ:

8. Գնահատման հիմնական չափանիշներ

8.1. «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամը ներկայացված հայտերը գնահատելու համար սահմանում է ներքո շարադրված հիմնական չափանիշները:

a) Աշխատանքների կատարման խելամիտ սահմաններում առաջարկվող գինը:
b) Հայտատուի նմանատիպ աշխատանքներ կատարելու փորձը, ներառյալ վերջին երեք տարիների ընթացքում կատարած նմանատիպ աշխատանքների ծավալը:
c) Առաջարկվող աշխատանքների կատարման ժամանակացույցը, որը պետք է լինի ոչ ավել քան 40 օրացուցային օր:
d) Հայտատուի տեխնիկական, մարդկային և կառավարման ռեսուրսները

Գնահատման նպատակով «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամը կարող է, Հայտատուի համաձայնությամբ, այցելել Հայտատուի գրասենյակ, արտադրական տարածքներ և, հնարավորության դեպքում, Հայտատուի՝ նախկինում կատարած նմանատիպ աշխատանքների օբյեկտներ:

Հայտում ներկայացված ծավալաթերթում /հիմք է ընդունվում Ծավալաթերթի կնքված բնօրինակը/ արտացոլված գները կստուգվեն «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամի կողմից: Թվաբանական սխալների առկայության դեպքում «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամը հիմք կընդունի ճշգրտված գինը: Նման սխալների առկայության դեպքում «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամը կարող է հարցման միջոցով լրացուցիչ պարզաբանումներ պահանջել հայտատուից:

9. Այցելություն աշխատանքների իրականացման տարածք

Հայտատուի ցանկությամբ, «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամը հայտատուների համար կտրամադրի Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Պռոշյան համայնք 5-րդ փողոց, 12-րդ նրբանցք, 1-ին տուն հասցեում գտնվող տարածքի մուտքի և ուսումնասիրությունների հնարավորություն:

10. Կոնտակտային անձ հարցումներին պատասխանելու համար

Նախագծի ստացման և բոլոր այլ հարցերի դեպքում պետք է դիմել «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամի աշխատակից Կարեն Չախոյանին, 077-72-79-40 հեռախոսահամարներով: